# ԿԱՐԾԻՔ

**ԻԳ.00.04-«Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանը հայցող Ժաննա Հարությունի Հարությունյանի «Ֆրանսիայի քաղաքականությունը Աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991 թթ.» թեմայով ատենախոսության վերաբերյալ**

Հետազոտության թեմայի արդիականությունը որոշվում է Ֆրանսիայի առանձնահատուկ դերով Աֆրիկայում, առաջին հերթին նրա ֆրանկոֆոն երկրներում: Ֆրանսիան աֆրիկյան երկրների հիմնական գործընկերներից է անվտանգության ոլորտում՝ համակարգող դերակատարում ունենալով ռազմաքաղաքական գործողություններում, ինչպես նաև անմիջական մասնակցություն ունենալով ՄԱԿ-ի, ԵՄ-ի, Աֆրիկյան միության և Արևմտյան Աֆրիկայի պետությունների տնտեսական համայնքի հովանու ներքո իրականացվող խաղաղապահ առաքելություններին:

Արևմտյան և Կենտրոնական Աֆրիկայի երկրներում գաղութացման ժամանակաշրջանում ձևավորվեց Ֆրանսիայի շահերի ոլորտը, որը դարձավ Հինգերորդ Հանրապետության քաղաքական և տնտեսական ազդեցության գոտին մայրցամաքում: Հետգաղութատիրական դարաշրջանում գաղութատիրության հայեցակարգը մարմնավորվեց նեոգաղութատիրության ֆրանսիական կուրսի զարգացման կամ աֆրիկյան մի շարք պետությունների նկատմամբ քաղաքական, ռազմական և տնտեսական գերիշխանության համակարգի ստեղծման մեջ:

Ներկայացված աշխատանքում հեղինակը փորձ է կատարել ուսումնասիրելու հետևյալ հիմնահարցերը՝ Ֆրանսիայի Հանրապետության աֆրիկյան գաղութների ապագաղութացման հիմքերը, Ֆրանսիայի Հանրապետության շահերը աֆրիկյան մայրցամաքում և համագործակցության առանձնահատկությունները, ինչպես նաև Հյուսիսային Աֆրիկայի և «Սև Աֆրիկայի» պետությունների նկատմամբ արտաքին քաղաքական ռազմավարության հիմնախնդիրները: Այս համատեքստում հեղինակն

ուշադրություն է դարձրել Ֆրանսիայի Հանրապետության մշակութային քաղաքականությանը՝ մեկնաբանելով այդ գործիքակազմի արդյունավետության գնահատման հիմնախնդիրներին:

Սույն աշխատանքի ներածությունում հեղինակը որոշակիորեն ներկայացրել է թեմայի արդիականությունը, գիտական մշակվածության աստիճանը, օբյեկտը և առարկան, նպատակներն ու խնդիրները, գիտական նորույթը, տեսական և գործնական նշանակությունը: Իսկ թեկնածուական ատենախոսության եզրակացությունում հեղինակը շարադրել է մի շարք գաղափարներ:

Հիմնվելով վերոհիշյալ մոտեցումների և պաշտպանության ներկայացված հիմնական դրույթների վրա՝ ցանկանում եմ ներկայացնել հետևյալ դիտողությունները.

1. Ատենախոսության հետազոտության առարկան և օբյեկտը բավականին լայն են (էջ 3), որոնք էլ անհասկանալի են դարձրել հետազոտական վարկածն ու դա արտահայտող հետազոտության հարցը կամ հարցերը: Անհասկանալի է թե ի՞նչ է հեղինակը փաստարկում ատենախոսության մեջ՝ որպես ամբողջական ու համալիր աշխատություն:
2. Անհասկանալի է ատենախոսության հետազոտության նպատակի իրագործման համար հեղինակի կողմից առաջադրված ընդհանուր թվով 10 խնդիրները, որոնք ներառում են *Չորրորդ և Հինգերորդ հանրապետությունների աֆրիկյան քաղաքականությունը, ինչպես նաև ԱՄՆ-ի, ԽՍՀՄ-ի և ՆԱՏՕ-ի ազդեցության տարածման ընթացակարգերը* (էջ 4-5): Ընդ որում, բովանդակային առումով 4-րդ նպատակը կրկնում է նախորդ նպատակները, իսկ 10-րդ նպատակը՝ 5-րդը (էջ 4-5):
3. Վիճահարույց են հետազոտության հիմնական արդյունքները և դրանց գիտական նորույթի պատմագիտական չափումները (էջ 5-6): Դրանք նկարագրողական են և հակասական, իսկ ատենախոսության հետագա շարադրանքում չի բացահայտվում հեղինակի դիրքորոշումը: *Օրինակ՝ «գիտական նորույթը*

*կայանում է նրանում, որ առաջին անգամ մեկ հարթության վրա ուսումնասիրվում և առանձնացվում են Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմքում ընկած մեխանիզմները...»* (էջ 5):

4. Ցանկալի կլիներ, որպեսզի հեղինակը հիմնավորեր Ֆրանսիայի արտաքին քաղաքականության հիմքում ընկած այն մեխանիզմները, որոնց ուսումնասիրությունն ու առանձնացումը նրան հնարավորություն են տվել գիտական նորույթ ձևակերպել (էջ 5): Դա վերաբերում է նաև հեղինակի կողմից առաջին անգամ «տեսականորեն գիտական շրջանառության» մեջ դրված «Ֆրանսիայի ազգային արխիվի և Շառլ դը Գոլի համալսարանի փաստաթղթային արխիվի նորանոր նյութերին» (էջ 5): Որո՞նք են այդ նորովի մեկնաբանված դրույթներն ու վերաիմաստավորված եզրահանգումները էջ 5):
5. Անհասկանալի է, թե ինչու՞ է հեղինակը ընտրել 1961-1991 թվականների ժամանակահատվածը, քանի որ դա խանգարել է և տեխնիկապես անհնար է դարձրել, որպեսզի հեղինակը կենտրոնանա 30 տարվա առանցքային իրադարձությունների ու գործընթացների համեմատական վերլուծության վրա (էջ 7): Ինչ վերաբերում է ատենախոսության 1991 թվականի ժամանակագրական ընտրությանը (էջ 7), որը հեղինակը փոխկապակցել է ԵՄ-ի ստեղծման հետ, ապա Եվրամիությունը ստեղծվել է 1992 թ. Մաաստրիխտի պայմանագրով, որն ուժի մեջ է մտել 1993 թ. նոյեմբերի 1-ին:
6. Անհամեմատ թերի են այն գաղափարները, որոնք հեղինակը շարադրել է ատենախոսության երրորդ գլխի առաջին և երկրորդ ենթագլուխներում: Քանի որ

[1] Այդ մասին տե՛ս Обичкина Е. О., Эволюция внешней политики Франции по окончании холодной войны (к. 1980-х - нач. 2000-х гг.). Дисс. на соиск. ...д.и.н. М., 2005, Славенов В. П., Внешняя политика Франции 1974-1981. М.:1981; Славенов В. П., Очерки внешней политики Франции.1981-1986. М.,1986, Шилов В. С., Политические партии и внешняя политика Франции (1958-1969). М., 1977; Шилов В. С., Внешняя политика и партии во Франции (1969-1981). М., 1994, Деев А. С., Современная Франция: механизм формирования внешней политики. М.,1985, Тюлин И. Г., Внешнеполитическая мысль современной Франции. М.: Международные отношения, 1988, Французская дипломатия и оборона после окончания холодной войны: новое испытание голлистского наследия // Актуальные проблемы Европы. Внешняя политика и безопасность европейских государств. М.: ИНИОН РАН, 1995, №4; Золотова Л. Г., Франция - « enfant terrible» НАТО // США и Канада. 2003. № 12 և ուրիշներ:

հեղինակը ներկայացրել է հանրահայտ հետազոտողների մտքեր՝ շարադրելով նկարագրողական բնույթի տեքստ: Օրինակ, երբ հեղինակն արձանագրում է, որ *«հանուն ճշմարտության հեղինակը նկատել է, որ չինական քաղաքականության մեջ ամեն ինչ չէ, որ ձեռնտու է աֆրիկացիներին»*, ապա ավելացնում է, որ *«ոմանց մեջ երկյուղներ են առաջացնում այն համառությունը, որով Չինաստանը գործում է Աֆրիկայում»* (էջ 112): Այունահետև շարունակում է՝ նշելով, որ *«որպես սպառնալիք է ընկալվում նաև չինական ապրանքների հեղեղը: Աֆրիկացիները դժգոհ են նաև այն բանից, որ մասնագետների մեծ մասը բերվում է Չինաստանից»* (էջ 112): Ինչ վերաբերում է երկրորդ ենթագլխին, ապա հակասական է նույնիսկ վերնագիրը, քանի որ այն այլ իմաստ ունի: Հեղինակը փորձել է քննարկել հարցեր, որոնք վերաբերում են Ֆրանսիայի մշակության քաղաքականությանը: Կարծում եմ տրամաբանական կլիներ ֆրանսիական մշակութային դիվանագիտության մեխանիզմների ուսումնասիրությունը: Վերջինիս արդիականությունը հաստատված է Ֆրանսիայի արտաքին քաղաքականության զարգացման ներկայիս միտումներով, որն ակտիվորեն մասնակցում է տարածաշրջանի ռազմաքաղաքական, տնտեսական և մշակութային զարգացմանը: Աֆրիկան Ֆրանսիայի ավանդական «գավիթն» է, որի ռեսուրսների հարստությունը պայմանավորում է նրա շահագրգռվածությունը տարածաշրջանի վրա ազդեցության տարբեր մեխանիզմների մշակմամբ: Այս նպատակին հասնելու համար պետք էր նորովի լուծել հետևյալ խնդիրները. որոշել Ֆրանսիայի զարգացման միջազգային աջակցության քաղաքականության հիմնական առանձնահատկությունները, բացահայտել այս համագործակցության շրջանակներում առաջնահերթ ոլորտները, որոշել ֆրանսիական մշակութային դիվանագիտության հիմնական վեկտորները, ուսումնասիրել մշակույթի ոլորտում Ֆրանսիայի արտաքին քաղաքականության ռազմավարության ինստիտուցիոնալ հիմքը, բացահայտել Աֆրիկայի առաջնահերթ ենթատարածքները «փափուկ ուժի» քաղաքականության իրականացման տեսանկյունից:

7. Ցանկալի կլիներ, որպեսզի դիտարկվող ժամանակահատվածում հեղինակն օգտագործեր Ֆրանսիայի, Հյուսիսային Աֆրիկայի և «Սև Աֆրիկայի» պետությունների մարդկային կայուն զարգացման մակարդակի չափման ինդեքսներ:
8. Անհասկանալի է նաև ատենախոսության եզրակացությունները, որոնցից այդպես էլ պարզ չի դառնում հեղինակային մոտեցումն ու եզրահանգումները, քանի որ դրանք հանրահայտ մտքեր են և դրանցում բացակայում են հեղինակի նորարարական մոտեցումները (էջ 126-132):

Ելնելով վերոշարադրյալից, գտնում եմ, որ **Ժաննա Հարությունի Հարությունյանի «Ֆրանսիայի քաղաքականությունը Աֆրիկյան նախկին գաղութներում 1961-1991 թթ.»** թեմայով՝ ԻԳ.00.04 - «Միջազգային հարաբերություններ» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսությունը չի համապատասխանում ՀՀ-ում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի պահանջներին:

**Պաշտոնական ընդդիմախոս՝**

Երևանի պետական համալսարանի միջազգային հարաբերությունների
ֆակուլտետի քաղաքագիտության ամբիոնի վարիչ,
քաղ. գիտ. դոկտոր, պրոֆեսոր
Աշոտ Ալեքսանյան

Քաղ. գիտ. դոկտ., պրոֆ. Ա. Ս. Ալեքսանյանի ստորագրությունը հաստատում եմ՝
Երևանի պետական համալսարանի գիտական քարտուղար,
բանասիրական գիտությունների թեկնածու՝ Մ. Վ. Հովհաննիսյան

ք. Երևան, «15» սեպտեմբեր 2022 թ.